6. Գյուղխորհրդի սան սեկցիայի հետ համաձայնեցնել դպրոցի և գյուղի սանիտարական աշխատանքները կանոնավորելու գործը:
7. Կազմել զրադրամաներ գյուղի հիվանդությունների մասին ըստ ամիսների:
8. Ուսումնասիրել մի քանի ընտանիքներում, թե ինչպես են գյուղացիք խնամում ընտանի կենդանիներին:
9. Հեղափոխական տոների կազմակերպման ծրագրումը:
10. Պատի լրագրի կազմակերպումը:
11. Հասարակական կազմակերպությունների հիմք դնելը: Պաշր-ավիր-քիմ, Մոսկր, Փոխգլխի, «Կորչի անգրագիտությունը», «մանուկների բարեկամ ընկերություն»: Սերտ կապ պահպանել համապատասխան կազմակերպությունների հետ:

12. Աշխորհրդի և սեկցիաների պարբերական զեկուցումը իրենց աշխատանքների մասին:

Յեռամսյակների վերջում մեծ տեղ պետք է տալ հաշվառման և հաշվետվության աշխատանքներին: (Աղբյուրներ. Ս. Դավթյան. Պատի լրագիրը դպրոցում: «Ժող, Լուս.» 1926 թ. № 5—6.

Սերիկ՝ «Դպրոցի հասարակական աշխատանքները. «Ժող, Լուս.» 1927 թ. № 5, № 6.

Ծ Ր Ա Գ Ի Ր

**Ս. Թ. ոգոսոսսին կազմակերպվելիք ուսումնական ուսուցչական
կոնֆերենցիաների քաղաքականության հարցերի**

Կոնֆերենցիայի քաղաքականության ծրագրի հիմնական նյութը պետք է լինի լիկկալանների 1927 թ. կազմած և կիսագրագետների զբաղ-րոցների ծրագրների պարզաբանումն ու քննությունը. սրա հետ կապված պետք է լինեն և մեթոդական հարցերը, վրի համար անհրաժեշտ է ողտագործել լիկկալանների և կիսագրագետների դպրոցների ուսուցիչների համար կազմած մեթոդական ժողովածուն և մեթոդական հարցերի վերաբերյալ այն վորոշումները, վորոնք ընդունված են քաղաքականության մասին խորհրդակցության կողմից. Աչքաթող չպետք է անել նաև լիկ. և կիսագրագետների դպրոցներում տարվող հաշվառման ձևերը:

Ի նկատի ունենալով, վոր 20 որ տեվոլումվումը կոնֆերենցիայում (քաղաքականության 10—12 ժամ) հնարավոր չե մանրադնին ուսումնասիրության լենթարկել լիկ. և կիս. դպրոցների ծրագիրն ամբողջովին, անհրաժեշտ է զեկավարվել հետևյալ սկզբունքներով:

Լիկկալանների ծրագրի ուսումնասիրություն

1. Քաղաքականության զեկավարը պետք է նախ տա ծրագրի ընդհանուր բովանդակությունը թե լիկ. և թե կիսագրագետների դպրոցների նկատմամբ՝ ձեռքի տակ ունենալով և ուսումնասիրելով լիկ. և կիս. զբաղ-րոցների ծրագրերը:

Լիկկալանների ծրագրի մեջ կանգ առնել նախ թե ում պետք է համարել անգրագետ, ներածական գրույցների որինակելի թեմաների գրա. ընդհանուր գծերով տալ լիկ. կալանների ծրագրի ընդհանուր սկզբունքները լեզվի դասավանդման ծրագիրը և մատեմատիկայի գրույցությունը:

2. Ծրագիրն ամբողջովին հասկանալու և «Գրագետ» աչքուբենարանի մեթոդին ծանոթանալու համար անհրաժեշտ է մեր «Ժողովածու» մեջ զե-տեղված «Գրագիտության ուսուցման ամբողջ նախագասությունների ու դասերի վերլուծական համադրական մեթոդ» հոդվածը մանրամասն ուսում-նասիրել նպատակ ունենալով «Գրագետ» դասագրքի մեթոդի ճիշտ կի-րառումը» (հնչյունական մեթոդը բոլորովին անթույլատրելի չե հասակա-վորների դպրոցներում):

3. Դասավանդման մեթոդին ծանոթանալուց հետո, անհրաժեշտ է ծրա-

գրում ղեկավարում ութն օրինակելի դասերի ուսումնասիրություն կատարել: Այս դասերն ուսումնասիրելուց հետո պետք է «Գրագետ»-ի այլուրենական ամբողջ մասն աշխատել ուսումնասիրել նույն ձևով:

4. Լիկկալանների ուսուցիչների հատուկ ուղղորդությունը պետք է դարձնել գրավորների տեխնիկայի և բովանդակության վրա, «Գրագետ»-ում ղեկավարում գրավոր աշխատանքների տեխնիկան պետք է պարզացնել՝ մանավանդ ավելորդ պետք է համարել մեծատառերի բարձրացնող գծերը: Մեծատառերն ընդհանրապես պետք է նման լին փոքրատառերին:

5. Ծանոթանալով լիկ. ծրագրում ղեկավարում՝ հասակավորների մատենատեղի գրագիտությունն ընդհանրապես՝ մանրամասն քննության լինելով ալն մասը, վորը պետք է անցնի այլուրենարանի հետ միասին և և վորոնց մի քանի օրինակները ղեկավարում են «Գրագետ» դասագրքում: Ելեմենտար գաղափար առ չափ ու կշռի մեծապես սխալմի մասին, ոգտվելով քաղաքական հրատարակած «չափ ու կշռի մեծապես սխալմի անհրաժեշտությունը» գրքից: (Աշխատանքների ղեկավար ընկերը անպայման պետք է ծանոթանա նաև Շավարշյանի «Հասակավորների մատենատեղիական գրագիտությունը» հոդվածին (Մեթ. ժող. չեր. 54):

Կիսագրագետների դպրոցների ծրագրի ուսումնասիրություն

1. Կիս. ծրագրի ընդհանուր բովանդակությունը (չորս բաժին) ծանոթանալուց հետո մանրամասն կանգ առնել առաջին բաժնի ԱՍԽՀ քաղաքատեսակաշխարհագրական տնտեսության և յերրորդ բաժնի՝ Անդրկովկասի գյուղատնտեսության վրա: Այս յերկու նյութերի թեմաներն ուսումնասիրելու համար պետք է ոգտագործել հասակավոր կիսագրագետների համար կազմած «տնտեսական աշխարհագրություն և բնագիտություն» ձեռնարկը Արրահամյանի և Հասարկյանի):

2. Կիսագր. դպրոցներում մատենատեղիական ոգտագործելու համար պետք է ոգտագործել հասակավոր. կիսագրագետների համար «Մատենատեղիական աշխատանքի գիրքը» (Գասպարյանի):

3 Մեթոդական հարցերին ծանոթանալու համար պետք է ղեկավարվել կից ուղարկվող «մեթոդական հարցեր քաղաքական դպրոցական հիմնարկների վերաբերյալ» թեզիսներով: Լիկ. և կիս. դպրոցների մնացած նյութերը պետք է ուսումնասիրել հետևյալ ուսուցչական ուղղության մանկավարժական խորհրդակցությունը:

Յուրաքանչյուր ուղղության կոնֆերանսի լիկ. և կիս. դպրոցներում պարտադր ուսուցիչներն անպայման պետք է ունենան հետևյալ ձեռնարկներն ու դասագրքերը.

1. Լիկկալանների ծրագիր.
2. Կիսագրագետների ծրագիր.
3. Մեթոդական ժողովածու.
4. Ձեռնարկ տնտեսական աշխարհագրության և բնագիտության.
5. Չափ ու կշռի մեծապես սխալմի անհրաժեշտությունը.
6. Գրագետ.
7. Աշխատանք 1 մաս
8. Աշխատանք 2 մաս
9. Հաշվառման ձև:

10 «Հասակավորների մատենատեղիական գիրք» (Գասպարյան)

Քաղաքագիտությունը լիկկալաններում.

Քաղաքագիտությունը լիկկալաններում սովորողներին իրազեկ է պահում շրջապատող քաղաքական ու հասարակական կյանքին՝ հնարավորություն տալով նրանց գիտակցորեն մասնակցելու լեռերի շինարարական ու քաղաքական կյանքին:

2. Քաղաքագիտությունը լիկկալանում տարվում է վոչ թե իբրև առանձին դաս, այլ վորպես պարզաբանում այն բոլոր լողունների, վորոնք հանդիպում են «Գրագետ» դասագրքում:

3. Քաղաքագիտությունը լիկկալանում սերտորեն կապված պիտի լինի դասագրքի նյութի հետ: Պարապմունքը պետք է ստորվի վորպես պարզաբանում այն բոլոր լողունների, նյութի և հեղափոխական տոների, վորոնք ամփոփված են դասագրքի մեջ:

4. Առաջին յերկու ամիսներն ուսուցիչը տանում է գրույցներ, վորի միջոցով չուրացվում է լողունների հասկացողությունն ու նրանց գիտակից ընթերցումը: Տառերի ճանաչման շրջանից հետո (3—4) քաղաքագիտական հարցերի վերաբերյալ գրույցները նպատակ ունեն ավելի խորացնելու քաղաքագիտական այն բոլոր գիտելիքները, վորոնց ուսանողները ստացել են առաջին շրջանում: Այս պատճառով ուսուցչին անհրաժեշտ է նյութերը մեծ մասամբ վերցնել լրագրերից ու ամսագրերից:

5. Լրագիրը հանդիսանում է լավագույն միջոցը ճիշտ հասկանալու ընթացիկ գրությունը և միևնույն ժամանակ նա աշխուժացնում է գրպոցական աշխատանքները, իսկ լիկկալանի պարապմունքներն ավարտելուց հետո, լրագիրը հանդիսանում է անդրագիտության ռեցեզիվի դեմ կոմիտե լավագույն միջոցը:

Մեթոդական հարցերը քաղաքագիտության դպրոցական հիմնարկների վերաբերյալ

1. Պրոլետարական դպրոցի հիմնական նպատակը կալանում է ուսանողությունը կոմունիզմի վողով դաստիարակման մեջ: Դպրոցը պետք է լինի կոմունիստական լուսավորության գեղքը, դասավանդման մեթոդն ևս հիմնված պետք է լինի դասակարգային սկզբունքի վրա:

2. Մեր դպրոցներում ուսանողները պետք է կարողանան պարզ ու վորոշ կերպով չուրացնել ծրագրի հիմնական բովանդակությունը: Նրանց մեջ պետք է զարթեցնել հետաքրքրությունը գեղի կուսակցական հասարակական յեվ քաղաքական հարցերը, նրանցից պետք է պատրաստել ակտիվ կուսակցականներ և խորհրդային շինարարներ:

3. Հասակավորների դպրոցում ինչ տիպի վոր նա լինի, դպրոցավարից թե ուսուցչից պահանջվում է վոչ միայն վորոշ գիտելիքներ ուսանողներին տալու, այստեղ ուսուցիչը պետք է լինի վոչ թե միայն դասատուի դերում, այլ և կրթողի և կազմակերպողի, ունենդիրներից նա պետք է ստեղծի ընկերաբար աշխատող կոլեկտիվ:

4. Այս պատճառով անհրաժեշտ է նախ քան պարապմունքի սկսելը ծանոթանալ սովորողների սոցիալական կազմի, նրանց աշխատանքի ձևի և

կենցաղային պայմանների հետ, իմանալ նրանց մտավոր կարողություններն ու ունակությունները: Ներածական զրույցը պետք է տարվի վոչ թե միայն սովորողների հետ ծանոթանալու նպատակով, այլ և բացատրվի դրալորոցի նպատակը, ծրագրի ընդհանուր բովանդակությունը, կապելով տվյալ դպրոցն ընդհանուր լուսավորության խնդիրների հետ մեր անտեսական վերելքի և յերկրի ինդուստրիալիզացման խնդիրների հետ:

5. Մարքսիստական մեթոդիկան յեղակատ պետք է ունենա այն, թե ուսանողները սոցիալ անտեսական վեր շերտին են պատկանում: Չի կարելի պարագմունքի միևնույն մոտեցումն ունենալ տարբեր միջավայրից դուրս յեկած ուսանողներին, այն է գյուղացիական, բանվորական, կամ ինտելիգենտական:

6. Աչքի առաջ պետք է ունենալ այն հանգամանքը, վոր ինտելիգենտը շուտ է ըմբռնում վերացական խնդիրները, շատ անգամ չպատկերացնելով այս կամ այն յերևույթը կոնկրետ կերպով. այս կամ այն պրոցեսը իրականություն մեջ. սրան հակառակ՝ բանվորը կամ գյուղացին յերևույթը նախ և առաջ պատկերացնում է կոնկրետ կերպով, այնպես, ինչպես նա փաստացի տեսնում է. նա կոնկրետից անցնում է դեպի վերացական ըմբռնումը և հասկանում է նրա էությունը: Այս տեսակետից դասավանդման ժամանակ պետք է յեղնել կոնկրետից կամ մասնավորից պեպի վերացականը—ընդհանուրը: Կամ ընդհանուր այս կամ այն խնդրը պետք է վերլուծել մի քանի կոնկրետ խնդիրների և յերևույթների, վորոնք ծանոթ են բանվորին կամ գյուղացուն, ապա անցնել ընդհանուրին, վերացականին:

7. Ինկատի պետք է ունենալ և այն հանգամանքը, վոր դասավանդման մեթոդը այս կամ այն դպրոցում պայմանավորվում է հետևյալ յերեք հանգամանքներով: 1) դպրոցի նպատակով, 2) սովորողների ոոցիալական կազմով, 3) տվյալ դպրոցի կոնկրետ պայմաններով:

8. Մեր դպրոցները դեռ շատ հեռու յեն դասավանդման ցանկալի մեթոդների գործադրումներից: Մեր պայմանները շատ տեղերում թույլ չեն տալիս կիրառելու Հոկտեմբերյան հեղափոխության առաջադրած նոր մեթոդները,

Մերօգական հարցերը լիկկայաճճեում յեվ կիսագրագետների գպրոցներում

1. Գրագիտությունը սովորելու համար անհրաժեշտ է կիրառել ամբողջ բաների ու նախագասությունների վերլուծական համադրական մեթոդը (տես. Մեթոդական ժողովածու). անգրագետների խմբակներում կոմպլեքսային սխեմներ թելադրում է ինքը դասադիրքը. այստեղ միայն վորոշ հավելումներ պետք է անել թվաբանության նյութն անցնելիս: Կիսագրագետների դպրոցում, նաչած ուսուցչի պատրաստականությանը, պետք է աշխատել կիրառել նույն սխեմներ, յեթե վոչ ամբողջովին, գոնե համաձայնեցնելով հանձնաժողովին հարակից առարկաների նյութը: Լիկկայանների և կիսագրագետների խմբակների պարագմունքների համար կիրառել Քաղլուսպիլովի մեթոդական հանձնաժողովի կողմից կազմած համապատասխան ծրագիրը:

2. Գրելու և կարգալու տեխնիկայի հետ միաժամանակ, դասադիրքից

դուրս պետք է ոգտագործվեն լրագրի վերնագիրը, մատչելի հոդվածների վերնագիրը, սովորողների ազգանունները, գյուղի և քաղաքի անունները, ամսաթիվը, որացույցը և այլն: Ըստ հնարավորության միաժամանակ գործածել և շարժական տառեր:

3. Ռեցիդիվի դեմ կռվելու համար անհրաժեշտ է, վոր ուսուցիչը սովորողին հենց սկզբից կապի գրքի, լրագրի հետ ու նպատակահարմար ձևով ոգտագործի նրանց:

4. Անգրագետների հետ պարագոյ ուսուցիչը վոչ թե միայն պարագելու մեթոդը պիտի իմանա, այլ և ծանոթ լինի ազիտացիայի և պրոպագանդայի մեթոդների հետ անգրագիտության վերացման ասպարեզում:

5. Անգրագիտության վերացման ասպարեզում պետք է մասսայականացնել մեթոդական խնդիրը, խրճիթվարը, ԼԿՅԵՄ-ի անդամները, կիրառների գրագետ պատգամավորուհիները, ակտիվ գրագետ գյուղացիները, վորոնք աշխատում են «կորչի անգրագիտության» ընկ. գծով, պետք է անպատճառ ծանոթ լինեն գրագիտության մեթոդի հետ, ընկերության գծով, թե անհատական և թե խմբակային պարագմունքները տանելու համար:

6. Թվաբանության դասավանդման նպատակը պետք է լինի վոչ թե միայն գրավոր գործնական հաշիվները սովորացնելը, այլ և հազարի շրջանում ծանոթացնել սովորողներին բանավոր գործողությունների պարզ ձևերի հետ:

7. Մեթոդական աշխատանքները խորացնելու համար անհրաժեշտ է ոգտագործել ռալոնական ուսուցչական ժողովները: Բացի գրանից, գոնե տարին մի անգամ, տարվա սկզբին, անցկացնել ռալոններում 3—4 որվա դասընթացներ-կոնֆերենցիաներ, ոգտագործել նաև ամառային ուսուցչական դասընթացները. նույնպես «ժողովրդական լուսավորության» եջերում պարզաբանել մեթոդական հարցեր ու խնդիրներ:

8. Դասավանդման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել կարգալու տեխնիկային. պետք է կարգալ բարձր և վորոշ առոգանություններ: Դրավոր տեխնիկան նույնպես պետք է ուշադրության առնվի. պետք է գրել այնպես, վոր վոչ թե միայն ինքը ուսանողը, այլ և ամեն մեկը հեշտություն գրածը կարդա:

ՆՅՈՒԹԵՐ ԴՊՐՎԱՐԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Ա. Դպրոցական գործի կազմակերպումը

1. Դպրոցի կազմակերպության հիմնական խնդիրները: Դպրվարությունն անցյալում. — դպրվարությունը ներկայումս. դպրոցն ինչպես որգանիզմ. Դպրոցն ու կյանքը, դպրոցն ու միջավայրը: Դպրոցի խնդիրները: Նոր Դպր. ճանապ. եջ 89—154. Գրականություն H. H. Иорданский школоведение եջ 7—18:

2. Վիճակագրությունը դպրոցում: Վիճակագրությունը դպրոցի կազմակերպչական խնդիրներում:—Ինչ է վիճակագրությունը և աշխատանքի վիճակագրական մեթոդները:—Ժողովրդական լուսավորության վիճակագրումը — Դպրոցական վիճակագրություն:— Դպրոցական հասակի յերեխաների հաշվառումը:— Ազգաբնակչության կյանքի կուլտուր-անտեսական պայմանների հաշվառման գործում ուսուցչի դերը:

Դրակ. նույնը էջ 83—96. — Вихляев — Руковод. по статист. народн. образования, изд. НКП. 1919 г. Над. курсы надому 1924 г. № 19.

Բ. Դպրոցի լեզվադպրոցական կյանքի կազմակերպումը

1. Առանձին դպրոցի տեղը ընդհանուր դպրոցական սխառմի մեջ: Դպրոցական գործն ու դպրոցը: Յուրաքանչյուր դպրոցի կազմակերպիչ ուժերը: Դպրոցի ընդհանուր կառուցվածքը:

Նույնը. էջ 97—100

2. Դպրոցի վարչությունը: Ով և կառավարում դպրոցը: Վարչության տեղական որդանները: Ֆինանսների մասնակարարումը: Տնտ. խորհուրդ և շեֆություն դպրոցում: Դպրվար և դպրոցական խորհուրդ: Աշակերտության մասնակցությունը դպրոցական խորհրդի մեջ: Դպրոցի տեխնիքական պերսոնալը: Դպրոցի հաշվապետությունը: Ազգաբնակչությունը, ծնողներն ու դպրոցը:

На путях к нов. школе 1925—26 г. учит. газета 1924. № 34

Նույնը էջ 197—117

3. Դպրոցի շենքն ու դպրոցի արտաքին կառավարումը: Դպրոցի կառավարության սոցիալ-մանկավարժական նշանակությունը: Դպրոցական շենքը: Դպրոցական բակն ու դպրոցին կից հողարածիրը: Դասարանի կառուցումը: Դպրոցական կահ կարասիք:

Նույնը էջ. 117—123 — Եղիշան՝ «Դպրոցական շենք».

4. Ուսումնական պիտույքներ և ուսումնական հիմնարկներ: Դասագիրք: Դասական պիտույքներ: Ձեռք բերելիք և ինքնաշեն ուսումնական պիտույքներ: Կարինետ լորորատորիաներ: Դպրոցական և կենտրոնական շաբաթական մուգեյ: Դպրոցական զրազարան: Լենինյան անկյուն: Կենդանի բնության անկյուն: Դպրոցական ցուցահանդես: Դպրոցական արհեստանոցներ: Դպրոցի կապը շրջանի արտադրական հիմնարկների հետ:

Նույնը էջ 128—147: На путь к нов. школе, 1924 № 3, 1925 г. № 2—3.

5. Աշակերտություն: Աշակերտության սոցիալական կազմը — Ընդունելություններ: Հասակ — Փոխադրություն նույն խմբում չերկրորդ տարին մնալը և դպրոցից գնալը մինչև դասընթացի ավարտելը: Դպրոցից հեռացնելը: Դպրոցի ավարտելը: Յերկեսու դաստիարակություն:

Նույնը. էջ 148—156.

Դպրոցական աշխատանքի կազմակերպումը — Դպրոցական աշխատանքների կազմակերպությունը և վողջ բովանդակությունը: Աշխատանքի պլանի ընդհանուր ըստ ԿՍԻ-ի ծրագրերի: Աշխատանքի կազմակերպումն ու մեթոդները: Որինակելի և մինիմալ ծրագրեր: Յերեխաների մասնակցությունը ծրագրի մշակման գործում: Կոլլեկտիվ և անհատական աշխատանքի կազմակերպումը: Խմբակային և ողակային աշխատանքի կազմակերպումը: Աշակերտության տնային պարապմունքները: Ամասնային դպրոց — 1 2 3 խմբերի հետ միացյալ պարապմունք:

Նույնը էջ 157—182. Ժողովուս. 1927 թ. № 6 էջ 16:

Դպրոցական աշխատանքի հաշվառումը — Հաշվառման ընդհանուր հիմունքները: Հաշվառման ձեւերն ու տեսակները: Հաշվառման ժամանակահատվածները: Դպրոցական հաշվառման հաշվառում: Որպեսզի աշխատանքի հաշվառումը: — Նույնը էջ 182—191. Ժողովուս. 1927 թ. № 4 էջ 25:—

Նախաշրջանները: Քանակական և վերական հաշվառում: Որպերը: Անհատական և կոլլեկտիվ հաշվառում: Ցուցահանդեսներ: Ուսուցչի աշխատանքի հաշվառումը: —

Նույնը էջ 182—191. Ժողովուս. 1927 թ. № 4 էջ 25:—

Դպրոցական կյանք — Դպրոցի կյանքը: Դպրոցական որ: Ուսումնական պարապմունքների բաշխումը, կապված չերեխաների հոգնածության հետ: Ամառնային, ձմեռային և զարնային արձակուրդներ: Դպրոցական տոներ Դպրոցական խաղեր: Ակումբային և խմբակային պարապմունքները դպրոցում: Լրագիրը դպրոցում: Աշակերտական հանդեսներ և որագրեր երգիչների: Մանկական դպրոցական և արտադպրոցական կազմակերպությունները: Դպրոցական կոոպերացիա: Դպրոցների հաղորդակցությունը:

Նույնը էջ 210—235: Ժողովուս. 1927 թ. № 5 (էջ 14) № 6 (էջ 16):

Ինքնավարությունը դպրոցում: Ինչ բան և դպրոցական ինքնավարությունը: Ինքնավարություն և դիպլոմալիստ. պատիժ և մանկական դաստարան: Խմբակի, դասարանի և ինքնավարության առաջ գալը: Ինքնավարության սխեման և ձևերը: մանկական ժողովներ, դպրոց, համայնք, ողակային սխառմ և դպրոցական հանրապետություն: Ինքնավարության որդանները: Ինքնավարություն և աշխատանք:

Նույնը էջ 236—252, Նոր դպր. ճանապ. էջ 187

Մանկական ցամաքում ու դպրոցը — Դպրոցում մանկական շաբաթական ու դադափարական հիմունքները: Կանոնադրություն կոմսոմոլի և պիտներության մասին դպրոցում: Համամիութենական ուսուցչական համագումարը կոմսոմոլի մասին: Կոմսոմոլի և պիտներության աշխատանքի բովանդակությունը դպրոցում: Ուսուցչի վերաբերմունքը: —

Նույնը էջ 253—263, Ժող. լուս. № 1 27 թ. էջ 17. № 5 էջ 3. 1926 № 3 էջ 9. Նոր դպր. ճանապ. էջ 392—442.

Դպրոցի սանիտարա-առողջապահական խնդիրները: Առողջապահությունը, սանիտարիան և ֆիզկուլտուրան դպրոցում: Դպրոցական շենքի և հողարածնի հոգատարությունը: Դասարանի հոգատարությունն ու զրազմունքը դասարանում: Աշակերտների հետազոտումը: Աշակերտության ռեֆերը: Ողակային վաննաներ, դուշ և լոգանք: Ֆիզիքական վարժություններ — լողանք, չմուշկախաղ: Խաղեր: Նախաճաշ: Վարակիչ հիվանդությունները դպրոցում, մեկուսացում և ախտահանություն, դպրոցական հիվանդություններ, չերեխաների սոցիալական հիվանդությունները: Ուսուցչի և տեխնիքական պերսոնալի առողջապահությունը: Դպրոցի սանիտարա-առողջապահական հսկողության կազմակերպումը: Դպրոցի սանիտարա-առողջապահական աշխատանքներն ազգաբնակչության մեջ: Բացթողնել և անտառային դպրոցներ, գաղութներ և սանատորիա:

Նույնը էջ 264—286. Ժողովուս. 1927 թ. № 1 էջ 24.

ԾՐԱԳԻՐ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՍԱՐ

Սույն ծրագրի նպատակն է՝ լինելով և աստիճանի գալուցի հասարակագիտության ծրագրից՝ ուսուցչության հնարավորություն տալ կոնֆերենցիաների ընթացքում ինքնուրույն կերպով՝ սեկցիաների միջոցով, ելնենտար կերպով մշակելու այն հասարակագիտական խնդիրները, վերոնշյալ կապված են նրա անմիջական աշխատանքների հետ գալուցում։ Ի նկատի ունենալով ուսուցիչների սահանափակ ժամանակն ու հնարավորությունը այդ կոնֆերենցիաներում, մենք ստիպված ենք տալ ամենամիկնումը և տարրական ձևով, չմոռանալով չերեք, վրա՝ 1 աստիճանի պահանջները բավարարելու համար ուսուցիչը պետք է ունենա ավելի լայն ու խոր հասարակագիտական և քաղաքական պատրաստություն, քան կարող է տալ սույն ծրագիրը։ Այդ նպատակին հասնելու համար, լրացուցիչ տրվում է ավելի լայն ծրագիր, վրա՝ դետեղված և սույն բրոշյուրի վերջում, վերջով ուսուցիչները կպարտապեն իրենց քաղաքական ինքնակրթությունը ամբողջ տարվա ընթացքում։

Այս ծրագիրը կազմվում է ի նկատի ունենալով և աստիճանում արծարծվող հասարակագիտական խնդիրներն առհասարակ՝ առանց ստորաբաժանելու ըստ տարիների։

Ծրագրում նախատեսված նյութը կարելի չէ անցնել զրույցների, բեֆերատների կամ խմբական աշխատանքների միջոցով կամ միաժամանակ կիրառելով այդ չերեք միջոցները՝ ըստ կարիքի և հնարավորությունների։

1. Գյուղի ճեփեսությունը ու նրա կազմակերպությունը

Գյուղատնտեսության բնական պայմանները, գյուղատնտ. սեզոնային բնույթը և կախվածությունը բնական պատահարներից, մեր գյուղատնտեսության ցածր բերքը և դրա պատճառները՝ պարարտացման բացակայությունը, ցածր տեխնիկա, անհատական մանր տնտեսություն, աշխատանքի պայմանները գյուղատնտեսության մեջ, աշխատանքի ծանր բնույթը և անհավասար բաշխումը տարվա՝ զանազան յեզանակներին, ընտանիքի բոլոր անդամների մասնակցությունը գյուղատնտեսական աշխատանքներին, չերեխաների աշխատանքը, կանանց աշխատանքը։

Գյուղի ճեփեսությունը. — Բատրակները, չքավորները, միջակներն ու կուլակները գյուղում, դրանցից ամեն մեկի ապրուստի հիմնական աղբյուրները, կուլակի շահագործման գլխավոր ձևերը գյուղում, բատրակի և չքավորի ապրուստի աղբյուրը՝ վարձու աշխատանք, ուսանողական տնայնագործական գրավումը, գյուղից դուրս աշխատանքի գնալը։

Գյուղում գոյություն ունեցող տնայնագործությունն ու արհեստները, աշխատանքի վատ պայմանները, աշխատի ու բանվորի շահագործումը, ցածր տեխնիկա, անհատական կազմակերպություն։

Գյուղատնտեսության բարեփոխում չեվ կոլեկտիվիզացիա, աշխատանքի ռացիոնալիզացիա չեվ բեքվառն. — Սերմնափոխության և բազմազանության սխեմա, հողի ցրվածության դեմ կռիվ, հողի պարարտացում, աշխատանքի մեքենայացում, տրակտորիզացիա, չեկտրոֆիկացիա։ Այս բոլորը հնարավոր է տնտեսությունը խոշոր՝ կոլեկտիվ հիմունքներով կազմակեր-

պելու միջոցով, արտելներ, կոլեկտիվ և կոմունաներ ու տնայնագործական արտելներ։ Նրանց դերը գյուղատնտեսությունը բարձրացնելու և սոցիալիստական ճանապարհով տանելու համար։ Խորհրդային իշխանությունն ինչ է անում չքավորներին ոգնելու և գյուղատնտեսությունը կոլեկտիվ հիմունքներով կազմակերպելու։

1) Քաղաքագիտության դասագիրք ըստ Յարոսլավսկու բ. ապագր. VI և VII զրույց 62—97 եջ. XI զր. 164—176 եջ։

1) Տալչին և Կոզլով՝ քաղաքագիտություն ա. պրակ, V զրույց 123—147, բ. պրակ, VI և VII զրույցներ եջ 151—192։

3) Արեգճաուզ և Պրոտասով I մաս VIII զրույց 164—186 եջ։

4) Զվագինցեվ և Բերնաշևսկի՝ «Արդյունաբեր. կապիտալիզմի շրջանից», 38—121 եջ։

2. Գյուղի չեվ քաղաքի կապը

Գյուղատնտեսական միջերկրների մի մասի սպառումը քաղաքում, վերտեղից և գյուղացին ստանում իրեն պատկանող անհրաժեշտ ապրանքները, քաղաքի արդյունաբերությունը, գործարանային արտադրություն և գյուղատնտեսություն արտադրության տարբերությունը, նյութի վերամշակում, մեքենայի գործադրություն, աշխատանքի պայմաններն ու աշխատանքի պաշտպանությունը գործարանում այժմ և հեղափոխությունից առաջ, արհեստակցական և այլ կազմակերպություններ գործարանում։ Ո՞ւմ են պատկանում գործարաններն այժմ և ո՞ւմ էին պատկանում առաջ։

Գյուղի և քաղաքի տնտեսական կապը ռազմական կոմունիզմի ժամանակ և այժմ, առևտուր՝ մասնավոր, պետական և կոոպերատիվ։ Գների իջեցման խնդիրը։

1) Քաղաքագիտ. դասագ. ըստ Յարոսլավսկու, VIII զրույց 110—129 եջ։

2) Արեգճաուզ և Պրոտասով Ա. մաս, VII զրույց, 144—162։

3) Զվագինցեվ և Բերնաշևսկի. «Արդյունաբերակ. կապիտ. շրջանից» 3—38. (1 և 2 հր.) Զվագինցեվ և Բերնաշևսկի, «Աշխատանքը նոր կյանքի հիմքն է» 3—57։

3. Խորհրդային սահմանագրությունը

Ընտրության սանդուղքը գյուղական խորհուրդներից մինչև ԽՍՀՄ-ի Խորհուրդների համագումարը։ Խորհրդային որդանները՝ գյուղխորհրդից և քաղխորհրդից սկսած մինչև ԿԳԿ և ժողկոմխորհր. սրանց բոլորի կառուցվածքն ու ֆունկցիաները։ Մանրամասն ծանոթանալ ա) ՀՍԽՀ, բ) Անդրկովկասի Սոց ֆեդ. Խորհ. Հանրապ. և գ) ԽՍՀՄ-ի սահմանագրությունների հետ։

Խորհրդային իշխանության ազդային քաղաքականությունը և ԽՍՀՄ-ի կազմելը։

1) Քաղաքագիտ. դասագիրք ըստ Յարոսլավսկու, ա. զր. 3—16 եջ։

2) Արեգճաուզ և Պրոտասով, Ա. մաս IV զր. 74—98 եջ։

3) Տալչին և Կոզլով՝ քաղաքագիտ. Ա. պրակ II զր. 27—57 եջ։

4) Բերդնիկով և Սվետլով Ա. մաս 188—221 և 377—398 եջեր։

5) Զվագինցեվ և Բերնաշևսկի. Աշխատանքը նոր կյանքի հիմքն է, 49—վերջը։

4. Հանգվորների չեվ գյուղացիների գրուքուներ հեղափոխությունից առաջ չեվ ցրանց պայքարը

Խնչպես ելին ապրում գյուղացիները ցարի և կալվածատերերի լծի տակ. միքեր ելին հողի տերերը (ազնվականներ, բեգեր, ազաներ, չեկեղեցի: Ցարը՝ ամենահարուստ կալվածատերը):

Ճորտություն. ճորտերի տնտեսական և իրավական դրությունը, ճորտության վերացումը 1861 թվին. գյուղացիության վիճակի վատթարացումը, գործարանների առաջացումը. բանվորների առաջացումն ու պայքարը կապիտալիստների դեմ. գործադուլներ: Բազմի գործադուլը. բանվորների կազմակերպումը քաղաքական կուսակցության մեջ. կազմակերպված բանվորության բացահայտ և ընդհատակյա պայքարը ցարի և կապիտալիստների դեմ:

Ռուս-կապոնական պատերազմը. 1905 թվի հեղափոխությունը. հունվարի 9-ը. ընդհանուր գործադուլ. բանվորների պատգամավորների առաջին խորհուրդները, ցարի հրովարտված ազատության մասին. ղեկավարելու ասպետությունը. հեղափոխության արձագանքն Անդրկովկասում, գործադուլներ. գյուղացիական խռովություններ:

1905 թ. հեղափոխության անհաջողությունն ու զրա պատճառները— (բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժումներն ու գործողությունները համաձայնեցված չեին, գործը ժողովրդի կողմը չեղ անցել և այլն):

Ցարական Ռուսաստանի ժողովուրդների իրավադուրկ վիճակը. լուսավորությունը ցարական իշխանության ժամանակ. չեկեղեցին և նրա իրավունքները. դպրոցն ու կրոնը՝ վերստին ղեկավարելու ամբողջական: Անդրկովկասում՝ ժողովուրդների փոխադարձ ատելության հրահրումն իշխանության կողմից: 1905 թվի հաշ-թուրքական կոտորածները:

1914 թ. իմպերիալիստական պատերազմը ազգաբնակչության քայքայումը. բանվորական կազմակերպությունների ուժեղացումը, բալլիստների և Լենինի վերաբերմունքը դեպի պատերազմը:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը. միապետության տապալումը. ժամանակավոր կառավարություն՝ բուրժուաների և կալվածատերերի սեփականությունը պաշտպանող կառավարություն. պատերազմը շարունակելու քաղաքականություն. բալլիստների և Լենինի գործունեությունը ալգ ժամանակ: Հոկտեմբերյան հեղափոխություն. բանվորական, գինավորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդի իշխանություն:

Անդրկովկասի բաժանվելը Խորհրդային Ռուսաստանից. ազգային բուրժուական հանրապետությունների կազմվելը. մենշևիկները, դաշնակցականների և մուսավաթիստների տիրապետությունը. իմպերիալիստական չեկերները և Անդրկովկասյան հանրապետությունների «անկախությունը» ալգ չեկերների զորքերն Անդրկովկասում: Իմպերիալիստներն ու ազգամիջյան կռիվները:

Բանվորների և գյուղացիների ասպտամբությունները Անդրկովկասի դանազան վայրերում: Անդրկովկասի խորհրդայնացումը. աշխատավորների ազատագրումը և ժողովուրդների համերաշխությունը խորհրդային իշխանության որոք:

Մեր չեկերի և արտասահմանյան կապիտալիստների ու կալվածատե-

րերի պայքարը խորհուրդների դեմ. քաղաքացիական կռիվներ, ինտերվենցիա (քարտեզի վրա ծանոթանալ քաղաքացիական կռիվների գլխավոր ճակատների հետ):

Հակահեղափոխականների պայքարը Վրաստանում, Ադրբեջանում, Հայաստանում: Փետրվարյան ասպտամբություն:

Կարմիր բանակի և հեղափոխության հաղթանակը բոլոր քաղաքներում: Խորհրդային իշխանության ամրանալն ու ռադիոնալիստական շինարարության անցնելը:

1) Քաղաքացիության դասազրիք բստ Ցարությանվալու. || զր. 17—26 էջ, || զր. 27—41 էջ, || զր. 42—59, || զր. 78—97 էջ, || զր. 110—129 X զր. 130—146 էջ, || զր. 147—163 էջ:

2) Զվագինեյի և Բերնաշևի. Ֆեյդայիզմի շրջանում:

3) Տալին և Կոլոլ. Քաղաքացիություն Բ. պր. X||զր 335—վերջը:

4) Աբեղհաուդ և Պրոտասով Կուսակց. քաղաքացի. || մ. 189—317:

5) Բերդիկով և Սվետլով | մ. X| զրույց 294—328,

5. Կապիտալիստական չեկերներ. — նրանց տնտեսական սոցիալական և քաղաքական կառուցվածքը:

Քարտեզի վրա ծանոթանալ չեկերագնդի գլխավոր պետությունների հետ (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Միացյալ Նահանգներ, Ճապոնիա և այլն). Խնչ ենք ներմուծում արտասահմանից (մեքենաներ, ֆարիկաներ, վորոշ հում նյութեր):

Խնչպես են կառավարվում ալգ չեկերները. ռւմ են պատկանում հողը, գործարանները, հանքերը, չեկավթուղիներն ալնտեղ և մեղ մոտ. բանվորների պայքարը կապիտալիստների դեմ բուրժուական չեկերներում, ԽՍՀՄ-ի բանվորների կապը մյուս չեկերների բանվորների հետ: Կոմիտերն, Կիմ, Պրոֆինտերն, Մոպր:

Գաղութային չեկերների ճնշումն իմպերիալիստական չեկերների կողմից. Զինաստանի, Հնդկաստանի, Ցեդիպոտսի, Թյուրքիայի, Միրիայի, Մարոկկոյի և ալգ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարն իմպերիալիստների դեմ:

Խորհրդային չեկերների աշխատավորության վերաբերմունքը դեպի ճնշված ժողովուրդներն ու նրանց պայքարը:

1) Աբեղհաուդ և Պրոտասով. — կուսակց. զրագիտ. || մ. 318—347: (Վերցված գրքերում համապատասխան հատվածներ չկան):

ԼՈՒՍԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՆՔՆԱԶԱՐԳԱԶՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Քանիցս արդեն շեշտված է ալն խոշոր հետաքրքրությունը, վոր լուսաշխատավորները և մասնավորապես՝ գյուղական ուսուցչությունը, ցույց են տալիս դեպի ինքնազարգացման խնդիրները: Ցեվ սա բնական է. մեր տրնտեսական, քաղաքական կուլտուրական ընդհանուր վերելքի մեջ լուսաշխա-

տավորութունը ակտիվ շինարարի գերումն է, ուստի և չի կարող իր կուլ-
տուրական մակարդակով հետ մնալ ժամանակի պահանջներին: Խորհրդային
ներկա դպրոցի հետզհետե դարգացող պահանջները մի կողմից, հասարակա-
կան աշխատանքները՝ մյուս, լուսաշխատավորության առաջ նորանոր բարդ-
խնդիրներ են դնում, վորոնց լուծել հաճախ նա զժվարանում է, զուրկ լի-
նելով համապատասխան պատրաստութունից (ինչպես և պալմաններից):
Այստեղից էլ առաջ է գալիս լուսաշխատավորների լավագույն տարրի բուռն
ձգտումը՝ լրացնել իր կրթության թերին, բարձրացնել իր կվալիֆիկացիան
և ընդհանրապես՝ աճել կուլտուրական: Մեր ներկա պալմաններում լուսաշ-
խատավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու հնարավոր է լա-
վագույն մասնալական միջոցը ինքնադարգացման գործի ուղիով և կադ-
մակերպումն է:

Անցյալում այս ուղղությամբ կազմակերպվելու, աշխատելու փորձեր
չեղել են. սակայն այդ փորձերը իրենց ծավալով, կազմակերպությամբ ու
բովանդակությամբ չեղել են անբավարար:

Հաշվի առնելով անցյալի փորձը, ձեռնարկված է 19²⁷ 28 ուսման տա-
րուն լուսաշխատավորների ինքնադարգացման գործը ամբողջ ծավալով և
չեղած պահանջներին համապատասխան կազմակերպելու:

Գործի հաջողութունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջին հեր-
թին կուսակցական օրգանների ղեկավարութունն ու ուսանողութունը,
ապա լուսավորության օրգանների (և մասնավորապես քաղաքականութուն-
ների), ինչպես և պրոֆեսիոնալ ու հասարակական կազմակերպութունների
աջակցութունը: Գործի հաջողութունը խոշորագույն համով կախված է նաև
լուսաշխատավորներից իրենցից, նախ՝ թե նրանք ինչ աստիճան նախա-
ձեռնութուն, կազմակերպվածութուն ու համառ հետևողականութուն կը
հայտնաբերեն աշխատանքի ընթացքում: Դրանից էլ հեծապես կախված կը
լինի նրա հաջողութունը:

Լուսավորչության գծով առաջիկա ուսումնական տարվա նախորդին կադ-
մակերպվելիք շրջանային ուսուցչական կուրսկոնֆերանսներին գնելով լուս-
աշխատավորների ինքնադարգացման հիմնական խնդիրները, մեր նպատակն
է տալ ինքնադարգացման գործի կազմակերպության, մեթոդների ու հաշ-
վածման կարևորագույն խնդիրները և, ուղղակի, նախապատրաստվել ուս-
ման տարին սկսվելու հետ անցնել բուն աշխատանքներին: Առաջիկա կուրս
կոնֆերանսներին ուսուցչական կարևոր անելիքը պետք է լինի (բացի վե-
րոհիշելից, վորոշակի, ձևակերպված արտահայտել իր պահանջները և կոնկ-
րետ վորոշել իր անելիքները: Կոնֆերանսին մասնակցող յուրաքանչյուր
ուսուցիչ պետք է վորոշի, թե առաջիկա տարվա ընթացքում ինքնադար-
գացման չեղանակով ինչ խնդիրներ է ինքը ուսումնասիրելու և արդյոք ան-
հատաբար, թե՛ խմբական ձևով: Յեթե պարագմունքի խմբական ձևին ընտրի
(վոր ավելի գերադասելի չէ) նախաձեռնութուն պետք է վերցնի անդն ու անդը
կազմակերպելու խմբակը (համաձայն կանոնադրության) և հրավիրի առաջին
կազմակերպչական ժողովը: Այստեղ խումբը պետք է վորոշի իր հետագա զբաղ-
մունքների առարկան և գիմի միության համապատասխան գավալարչության ու-
ղարկելու ծրագիրը, զբաղմունքներ և այլն: Այս կերպ պետք է վարվեն նաև այնպիսի
ներքին, վորոնք այս կամ այն պատճառով հնարավորութուն չունեն վորեն խմ-
բակում աշխատելու: Այսպիսով հենց կոնֆերանսների ընթացքում կազմ-

վում է ինքնադարգացման առաջիկա տարվա ցանցը: Ցանցը վերը հիշված
ձևով կազմելու աշխատանքները ղեկավարութունը պետք է տանի շրջակա-
կոմին կից կուլտ հանձնաժողովը, վորի կողմից և պետք է կատարվի ան-
հատների ու խմբակների նախնական ցուցակագրութունը: Այժմ մի քանի
խոսք ծրագրի և ծրագրին վերաբերող թեզերի մասին: Ինչպես վերը ասվեց,
ծրագիրը ինքնադարգացման աշխատանքների ներածական մասն է միայն,
վոր անհրաժեշտաբար պետք է լուրացնի ինքնադարգացմամբ պարապել ցան-
կացող յուրաքանչյուր մեկը, վորպեսզի ի վիճակի լինի իր աշխատանքները
կանոնավոր կերպով կատարելու: Հավելվածների ձևով տրված կանոնադրու-
թյունները կոնֆերանսի ընթացքում պետք է մանրամասնորեն ուսումնա-
սիրել, գտնա հաճախակի և, կազմակերպչորեն աշխատանքները ճիշտ գնե-
լու համար:

Ինչ վերաբերում է ըստ ծրագրի թեզերին, սա չեղ տրված է այն նպա-
տակով, վոր վերջում բերված գրականութունը չձարելու դեպքում, հնարա-
վոր լինի անցնել ծրագրի ընդարձակելով, լուսարանելով և հիմնավորելով
ներկայացված թեզերը:

Թեզերի մեջ չեղած գործնական առաջադրությունները անպայման
պետք է կատարել գործնականապես աշխատանքին ծանոթանալու համար:

Տ.—Պողոսյան

(ԾՐԱԳԻՐ)

- I. Ինքնադարգացման կյությունն ու նպատակները.
- II. Ինքնադարգացման աշխատանքի կազմակերպումը.
- III. Ինքնադարգացման աշխատանքի բովանդակութունը.
- IV. Մտավոր աշխատանքի կազմակերպումն ու առողջապահութունը.
- V. Ինքնադարգացման աշխատանքի մեթոդիկան.
- VI. Ինքնադարգացման աշխատանքի հաշվառումը:

(ԶԵԿՈՒՑՄԱՆ ԹԵԶԵՐ)

I. ԻՆՔՆԱԴԱՐԳԱՑՄԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ա. խառնաձուր մասնագետի ձգտումը գիտությանը — Մինչ հեղափո-
խութունը ներկայումս իշխանության տեր բանվոր-գյուղացիական մաս-
նաները գուրկել են բուրժուական կուլտուրայի «բարիքներից» ոգտվելու
հնարավորութունից: Բուրժուական դասակարգային դպրոցների դռները
փակ են ին նրանց առաջ: Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով պրո-
լետարական կուլտուրային հաղորդակից դարձած այդ մասնաները, բնա-
կան, գիտության որ որի վրա աճող չտեսնված պահանջ են առաջադրում:

2. Գիտությանը անհրաժեշտությունը ա. խառնաձուրությանը համար. —
Թեքը ապրում ենք պրոլետարիատի գիտատուրայի շրջանում. Խ. Ս. Ն. Մ. -ի
աշխատավորութունը սոցիալիզմի կառուցման խիստ զժվարին ու պատա-
խանառու գործն է կատարում, վորի համար նրան անհափ անհրաժեշտ է
գիտության կուլտուրայի զենքը: «Վոչ մի չերկիր, վոչ մի դաբաշրջան քա-
ղաքացուն այսպիսի հակայական պահանջներ չի առաջադրել և իրեն հայտ-
նաբերելու այս աստիճան հնարավորություններ չի ընձեռել: Ահա թե ին-

չմէ գիտութեան աշխարհի հսկայական ծարավ կա և մեր կուսակցութեան շարքերում, և անկուսակցական բանվոր դասակարգի շարքերում, և ամենուրեք՝ միութեան բազմամիլիոն քաղաքացիութեան մեջ, — ասում և կուսակցական կիլին¹⁾։

3. Գիտութեան ձեռք բերելու միջոցները. — Մարդկությունը մինչև այժմ ճանաչվում է գիտութեան ձեռք բերելու չերեք միջոց.

ա. Ամենուրեք կյանքի փորձ (անկազմակերպ ինքնազարգացում)։

բ. Դպրոց.

գ. Կազմակերպված ինքնազարգացում,

Այս միջոցները իրարից կտրված, անկախ ու անշատ չեն. ընդհակառակը, խորը կապ կա նրանց միջև։ Դպրոցը, վոր գիտութեան ստանալու ամենից կազմակերպված ձևն է, առանց անկազմակերպ կենսափորձի կամ կազմակերպված ինքնազարգացման աշխատանքի շատ քիչ արդյունք կարող է տալ ավելին՝ դպրոցի աշխատանքը արդյունավետ է այնքան, վորքան նա կապված է իրական, կենդանի կյանքի հետ, վորքան մեծ տեղ է տալիս կազմակերպված ինքնազարգացման աշխատանքներին և կիրառում նրա մեթոդները։ Նույնը գիտութեան ձեռք բերելու մյուս միջոցների մասին։

4. Ինքնազարգացման աշխատանքի ելուքները. — Զբաղվել ինքնազարգացմամբ, նշանակում է համեմատաբար ինքնուրույն կերպով, առանց ուրիշների անմիջական ղեկավարութեան, գրքի, կյանքի ու փորձի միջոցով սխտեմատիկ, կազմակերպված աշխատանք կատարել՝ առաջադրված նպատակին հասնելու համար։

5. Լուսաշխատանքների ինքնազարգացումը. — Լուսաշխատավորների համար ինքնազարգացման աշխատանքն առանձնապես կարևոր, անզամանհրաժեշտ է. առանց ինքնազարգացման աշխատանքի նա վոչ կարող է բավարարել հետզհետե բարդացող դպրոցական-մանկավարժական մեծարժեք աշխատանքը։ Մեր ուսուցիչը հենց իր պրոֆեսիայի պահանջով հարկադրված է ինքնազարգացմամբ զբաղվելու, մյուս կողմից՝ նա հնարավորություն ունի իր ամենուրեք աշխատանքի ընթացքում կուտակած հարուստ փորձը բազմակողմանի կերպով ոգտագործելու ինքնազարգացման նպատակով։

6. Ինքնազարգացման նպատակները. — Ինքնազարգացման աշխատանքի հիմնական նպատակի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ վոչ միայն հին, մանր բուրժուական, և նոր մեթոդիստների միջև, այլ և վերջիններիս իրար միջև։ Այսպես՝ Վ. Նեսկին կատարելապես միանում է Ն. Զարով-նյազնու ընդունմանը, ըստ վորի ինքնազարգացման աշխատանքի հիմնական նպատակն «վերափոխել կյանքը իր բոլոր կողմերով իշան աշխատավորներին», մինչդեռ Վ. Վեյկշանը և ուրիշները ինքնազարգացման աշխատանքի հիմնական նպատակը համարում են աշխարհայացքի ընդարձակումը։

Մեր կարծիքով առաջին ընդունումը ավելի ճիշտ է. պրոլետարիատի գիտատուրայի ներկա պայմաններում մեր առաջ գրված միակ հիմնական խնդիրը նոր, սոցիալիստական կյանքի կառուցումն է, աշխարհայացքի ընդարձակման խնդիրը (մաքախզմի և լինինիզմի հիմունքներով) միայն զբանոժանդակող կարևոր գործոնը կարելի չէ նկատել։ Ինքնազարգացման աշխա-

տանքի վերոհիշյալ ընդհանուր, հիմնական նպատակից բացի, յուրաքանչյուր դեպքում կարող են առաջադրվել նրան յենթակա մասնավոր նպատակներ, բղիտղ տվյալ անհատի անձնական հետաքրքրությունից, պատրաստութեան աստիճանից, տեղական կոնկրետ պայմաններից ու պահանջներից և այլն։

II. ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ինքնազարգացման աշխատանքի և Ս. Ս. Ս. — ինքնազարգացման աշխատանքի հսկայական ծավալը, բազմապիսուսությունն ու բարդությունը նկատի ունենալով, նախ՝ չի կարելի այն առնել մի ընդհանուր սխեմայի մեջ և յերկրորդ՝ չի կարելի ամբողջությամբ կենտրոնացնել վորևէ հատուկ որգանի ձեռքում։ Վերոհիշյալ պատճառներով ինքնազարգացման աշխատանքի կազմակերպմամբ զբաղվում են մի շարք կազմակերպություններ, այսպես՝ կուսակցական և կոմսոմոլի կազմակերպությունները, քաղաքացիական ծառայությունները, պրոֆմիությունները, կոոպերատիվ որգանները և այլն։ Պարզ է, վոր սրանցից յուրաքանչյուրը աշխատում է իրեն ավելի վերաբերող վորոշ ուղղությամբ և վորոշ սահմաններում։

2. Ինքնազարգացման աշխատանքի կազմակերպչական ստուկսուրան լուսաշխատի միութեան գծով. — Մեր միութեան գծով ինքնազարգացման աշխատանքները ղեկավարում են պրոֆմարմիններին կից հատուկ ինքնազարգացման հանձնաժողովները։ Այդպիսի հանձնաժողովներ կազմակերպվում են գաղափարական վարչություններից սկսած մինչև կենտրոնական կոմիտեն։ Շրջաններում աշխատանքները ղեկավարում են կուլտ հանձնաժողովները (տես. ինքնազարգացման ոգնող կենտրոնական և Գաղափարային հանձնաժողովների կանոնադրությունը) — (հավելված № 1)։

3. Ինքնազարգացման ոգնող հանձնաժողովների յեվ լուսաշխատի սենեի գերը. — Հանձնաժողովները ինքնազարգացմամբ զբաղվող անհատներին ու խմբակներին տալիս են զանազան ծրագրեր (նախորոք հաշվի առնելով պահանջները), հանձնարարելի գրականության ցուցակներ, կազմակերպում են կոնսուլտացիա, տալիս են մեթոդական ցուցմունքներ և այլն։ Լուսաշխատները կազմակերպում են ինքնազարգացման կարինետներ, շրջիկ զբաղարաններ և ոժանդակում են վերը հիշված և բոլոր այլ միջոցներով։

4. Լուսաշխատանքների ինքնազարգացման աշխատանքի հիմնական ձևերը. — Ինքնազարգացման աշխատանքները կարելի չէ կատարել և անհատաբար, և կոլեկտիվ ձևով։ Կոլեկտիվ աշխատանքի ձևը խմբակայինն է։ Ինքնազարգացման խմբակը կարելի չէ կազմել միանմում 3, մաքսիմում 12 հոգուց։

Թի անհատական և թի խմբակային պարապմունքներն ինքնազարգացման գծով տարվում են կամովին սկզբունքներով։ Այս աչպես լինելով հանգերձ, խմբակային պարապմունքների հաջողությունը ապահովելու համար պետք է խստորեն կատարել հետևյալ պայմանները.

ա. Սմբակը կազմել պատրաստություն միատարր անհատներից.

բ. Բացարձակ կամ քողարկված վորևէ ձևում չգործադրել սրան կամ նրան խմբակի պարապմունքներին մասնակից դարձնելու (այդպիսիք միայն կխանդարեն աշխատանքը)։

¹⁾ Տես. А. Луначарский „Значение самообразования“.

դ. Պարագմունքի նյութն ընտրել խմբակի անդամների հետաքրքրությունն և կարողություններին համապատասխան.

դ. խմբակային պարագմունքների տեխնիկան վորոշելիս՝ հաշվի առնել անդամների պայմանները.

լե. Սկզբից և չեթ կազմակերպչորեն ձևավորել խմբակը (ընտրել նախագահ, քարտուղար, գրադարանագետ), կապվել համապատասխան ինքնազարգացման ոգնող հանձնաժողովի հետ և անշեղ գործադրել խմբակի իր ներքին խնդիրների վերաբերյալ կայացրած վորոշումները.

դ. խմբակի աշխատանքները այս կամ այն ձևով խանգարող անդամին ազատել խմբակի աշխատանքներից:

5. Իճճճազարգացման աշխատանքի նմանակությունը. — Ծրագրերի, աղբյուրների մատնանշում, բացակայությունը ուսուցում (Зачне образование), և ցիզոգիկ կոնսուլտացիա, կոնֆերանսներ և այլն:

6. Իճճճազարգացման աշխատանքների հարցերի շուրջը լուսաբանալու համար կոնսուլտացիայի մասին — (Տես նույն վերնագրով հավելված № 2):

7. Լուսաբանի միության իճճճազարգացման խմբակների կանոնադրությունը: — (Տես կանոնադրությունը՝ հավելված № 3):

III. ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՐ

1. Իճճճազարգացման աշխատանքների բովանդակության վորոշումներ. Ինքնազարգացման աշխատանքների ասպարեղում լուսաշխատավորների հետզհետե զարգացող հետաքրքրությունը թափանցում է միութենական կուլտ — աշխատանքների բոլոր բնագավառները: Թեև ինքնազարգացման աշխատանքի բովանդակության խնդրում վորոշ գեր կատարում են նաև լուսաշխատավորների անհատական շահերը, մոտենում և այլն, այնուամենայնիվ, նրանց հետաքրքրությունն հիմնական ուղղությունները վորոշվում են իրենց արտադրական պրոֆեսիոնալ և հասարակական աշխատանքների պահանջներով ու պայմաններով:

Ինքնազարգացման գծով լուսաշխատավորների հետաքրքրությունը զարգանում է գեպի հասարակական-քաղաքական, մանկավարժական, պրոֆեսիոնալ և հանրակրթական (գիտություն, տեխնիկա, գրականություն, գեղարվեստ) ուղղությամբ:

2. «Իճճճազարգացման աշխատանքներ»-ը. — Լուսաշխատավորների կուլտ բաժնին կից ինքնազարգացման ոգնող հանձնաժողովը, հաշվի առնելով լուսաշխատավորների ինքնազարգացման պահանջները, հրատարակել և ծրագրերի մի սերիա, «Ինքնազարգացման աստիճաններ» խորագրով: Այդ սերիայի մեջ մտնում են հետևյալ ցիկլերը՝ 1. հասարակագիտական, 2. գրական-լեզվաբանական, 3. մաթեմատիկական, 4. ֆիզիկո-տեխնիկական, 5. բուսաբանական-գյուղատնտեսական, 6. քիմիա-տեխնիկական, 7. բնագիտություն, մանկավարժական, 8. մեթոդական, 9. մանկավարժական ունակություններ, 10. նախադպրոցական գործ և 11. քաղաքական աշխատանք. սրանցից առաջին վեցը հանրակրթական բնույթ ունեն, մնացածները՝ մանկավարժական:

Ծրագրերի կառուցվածքին և բովանդակությանը ծանոթանալու համար կարդալ В. Вейкшан — «Как работать по ступеням самообразования» և ծրագրերից մեկը քննություն առնել կոնֆերանսում:

IV. ՄՏԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՐ

1. Աշխատանքի սխեման ու ծրագիրը. — Ինչպես ամեն մի այլ աշխատանք, նույնպես և մտավոր աշխատանքը, վորպեսզի արդյունավետ լինի, պետք է կատարվի ծրագրված և վորոշ սխեմանով: Անծրագիր, անսխեմա աշխատանքը վոշ միայն հարկավոր արդյունքը չի կարող տալ, այլ և, վորոշ դեպքերում, կարող է վնասել: Մի որինակով պարզենք մեր միտքը: Յենթադրենք դուք պատրաստվում եք գեկուցելու: Այս աշխատանքը ծրագրված ու սխեմանով կատարելու համար պետք է գնաք հետևյալ ընթացքով. ամենից առաջ պետք է պարզեք ձեր գեկուցման նպատակը, նրա բնույթը, ապա թե՛ ձև (ինչ առդիտորիայի), յե՛րր և վորտեղ եք տալու այդ գեկուցումը, այս ամենն անհրաժեշտ են ձեզ ձեր հանձնառությունը լուսաշխատանքում համար: Ապա, համաձայն ձեր նպատակադրության, պետք է կազմեք գեկուցման սխեման և այդ սխեմայի տակ գնեք ձեր ամբողջ գիտեցածը, ունեցած բոլոր տեղեկությունները տվյալ թեմայի վերաբերյալ: Այս աշխատանքն անհրաժեշտ է ձեր սեփական տեսակետները պարզելու, ունեցած փաստական մատերիալը ի մի հավաքելու, դասավորելու և ուրիշ նյութերից, աղբյուրներից ոգտվելու չափը վորոշելու համար: Այնուհետև կատարում եք ձեր գեկուցման վերաբերող նյութերի հավաքում, — և նախնական ծանոթությունից հետո, ընտրում եք դրանցից անհրաժեշտները. դասավորում համաձայն գեկուցման սխեմայի և կազմում ծրագիրը: Ծրագիրը կազմելուց հետո ձեզ մնում է մշակել ընտրած ամբողջ նյութը (այսինքն, կարդալ այն, և, համապատասխան նշանակություններն անելուց հետո, վերցնել հիմնական թեզերը, արտագրել կամ նշանակել մեջբերումների համար անհրաժեշտ հատվածները, թվական տվյալները, կազմել անհրաժեշտ գրաֆիկները, դիագրամները և այլն), ապա կազմել գեկուցման վերջնական կոնսպեկտը, վերը հիշված ամբողջ աշխատանքը կանոնավոր կատարելու և մամանակին ավարտելու նպատակով անհրաժեշտ և հաշվառման յենթարկել գեկուցումը պատրաստելու համար ձեզնից պահանջվելիք ամբողջ ժամանակի չափը և, ձեր տրամադրության տակ յեղած ժամանակամիջոցի հիման վրա՝ բաշխել որերի շարաթների վրա (կազմել աշխատանքի ժամանակացույց) և աշխատել խստիվ կիրառել այն: Աշխատանքի ընթացքում ել ձեզ ձեր ընթացքից շեղող անակնկալների դեմ պետք է համապատասխան կազմակերպչական միջոցներ ձեռք առնենք՝ վորոշված աշխատանքը ժամանակին ավարտելու համար: Այս կերպ տարված աշխատանքը միայն կարող է լինել արդյունավետ ու տնտեսական:

2. Աճառական առանձնահատկությունների նպատակահարմար ոգազորումը. — Մարդիկ, իրեն աշխատող մեքենաներ, տարբերվում են իրարից շատ հատկություններով: Այսպես, հայտնի չե, վոր մարդիկ, բայտ հիշողություն, զանազան տիպերի չեն բաժանվում (մոտորական, լսողական, տեսողական կամ խառը՝ նախորդների զանազան կոմբինացիաները). մի այլ որինակ, նույնպես հայտնի չե, վոր մարդկային որդանիզմը բնորոշակ է աշխատելու ցիկլային ձևով, այսինքն, աշխատանքի համար որդանիզմը բնական լարմանը վորոշ ժամանակից հետո հաջորդում է դադարի, հանգստի պահանջը, ահա այս բնական յերկույթը բոլոր մարդկաց նկատմամբ նույն

նութիւնը չի կատարվում: Մարդկանցից վոմանք շուտ են հոգնում, ուրիշներն՝ ուշ, վոմանք աշխատում են շաբաթական ցիկլերով, մշուսները՝ ամսական: Այն ժամանակ, յիշեք մեկի համար տվյալ աշխատանքը կարող է գուզադիպել եներգիալի լարման առավելագույն աստիճանին, մյուսի համար դա կարող է լինել եներգիալի անկման շրջանը և այլն: Աշխատանքի ընթացքում այս առանձնահատկությունները պիտի հաշվի առնել: Հոգնածութիւնը պրոբլեմի խնդրում խոշոր նշանակություն ունի և հետաքրքրութիւն մոմենտը, անհետաքրքրական աշխատանքը, իրրե կանոն, ավելի շուտ է հոգնեցնում, քան հետաքրքրականը:

3. ՄՏԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՅՈՒՄՆԵՐԸ. — Ինքնազարգացման աշխատանքը ծրագրելիս և այն ըստ ժամանակի դասավորելիս՝ նախ և առաջ պետք է հաշվի առնել և ապահովել մտավոր աշխատանքի հետեւյալ առողջապահական պայմանները:

Չափից ավելի չպետք է ծանրաբեռնվել աշխատանքով, հոգնած վիճակում չպետք է աշխատել, հոգնածութիւնը դադարեցնել պետք է դադարեցնել աշխատանքը և հանգստանալ, յերբեմն ել զբաղվել այլ մոմենտին հաճելի ու հետաքրքրական մի այլ աշխատանքով (ցանկալի է Փիզիկական աշխատանքը): Պետք է ուշադրություն դարձնել նաև աշխատանքի արտաքին պայմանների վրա՝ ընտրել այնպիսի տեղ, վոր լույս լինի, ողջ մաքուր և ազմուկից ազատ: Միաժամանակ մի քանի աշխատանքով չպարապել: Պարտաճանձն է ուշադրությունը, խիստ լարում պահանջում և շուտ հոգնեցնում: Չկարգալ պահած, կրճրով սեղանին հենված և գլուխը շատ ցած ձգած:

V. ԻՆԲՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

(ԻՆԲՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ)

1. ԳԻՐԲԸ ԼԵՎ ՏԵՂԸ ԻՆԲՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. — Ինքնազարգացման ամենակարևոր միջոցներից մեկը գիրքն է, գրականութիւնը մեջ կուտակված ամբողջ տերունդների, բազմամիլիոն մարդկության կողմից ու անհատական փորձը: Անհնար է մտածել վորեւ հարց, վորի պատասխանը այս կամ այն գրքում կարելի չլինի գտնել:

2. ԻՆԳՆԱՅԵՍ ԱԵՏԻ Ե ԿԱՐԳԱՂ ԳԻՐԲԸ. — Շատերը գիրքը կարգում են ժամանցի համար: Այսպես գիրք կարդալուց ոգուտ չկա: Վորեւ գիրք կարդալուց առաջ պետք է հարց տալ, թե ինչու չես կարգում այդ գիրքը: Յուրաքանչյուր գրքի ընթերցում պետք է կատարվի վորոշ, պարզ նպատակով: Գրքի ընթերցանությունից ընթացքում պետք է ուշադրությամբ հետևել հեղինակի ստեղծագործության ընթացքին, մտքում գրքի կոնսպեկտը կազմել (լեթե այդ գրքով չի արվում) և քննադատի գերում դնել իրեն հեղինակի լեզու-կացությունների վերաբերյալ՝ կուրորեն չընդունել ամեն մի այսած, մի խոսքով՝ կարգալ այնպես, վոր վերջում կարելի լինի թե վերաբերյալ գրքի բովանդակությունը և թե քննադատել այն: Սա այն միջոցն է պահանջն է, վորին պետք է բավարարի ամեն մի կանոնավոր ընթերցում:

3. ԳՐԻՆՆ ԵՐԵՐԻ ՈՂՋԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՂՆԵՐԸ. — Գրքի ոգտագործման ամենատարբերակալ լեզանակը մեկ գրքի ծայրի է ծայր կարգալն է: Սա գրքի ոգտագործման ամենատարբերակալ, բայց միակ լեզանակը չէ. գանազան նպա-

տակներով հաճախ ընթերցողը բավարարվում է գրքի մասնակի ընթերցումով, այսինքն՝ կարգում է միայն գրքի մի կամ մի քանի գլուխը: Յեթե իրեն հետաքրքրող նյութը ավելի բազմակողմանի կերպով և ցանկանում պարզաբանել, կարգում է միաժամանակ նույն նյութին վերաբերող մի քանի գրքեր, կամ այդ գրքերից համապատասխան հատվածներ: Այլ դեպքերում ընթերցողը չի բավարարվում իրեն հետաքրքրող մի կամ մի քանի գրքեր միայն մի անգամ կարգալով, այլ կարգում, մշակում է յերկրորդ, յերրորդ անգամ: Գրքի ոգտագործման վերջը թված յեղանակներից մեկի կամ մյուսի կիրառումը անհատական նախասիրությունից հետևանք չէ, այլ բղիտում է ընթերցողի առաջադրած նպատակներից:

4. ԻՆԳՆԱՅԵՍ ԳՐԻ ԱՌՆԵՂ ԿԱՐԳԱՅԱԾԸ. — Կարգացածը լավ յուրացնելու համար գործադրում են մի քանի միջոցներ, գրի չեն առնում առանձնապես կարևոր դարձվածներն ու նախադասությունները, կազմում են կարգացած գրքի կոնսպեկտը կամ թեզերը, գրում են գրքի ընթերցանությունից հետևանքով առաջացած հարցերը և հետադադում աշխատում պարզել այդ հարցերը: Բացի դրանից, գրում են սեփական տպավորություններն ու դիտողությունները կարգացածի վերաբերյալ:

5. ԿԱՐԳԱՅԱԾԻ ՈՂՋԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՈՒ ԽԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ. — Յուրաքանչյուր աշխատանք արժեքավոր է այն չափ, ինչ չափ հասարակականորեն ոգտակար է դառնում: Գիտությունը ձեռք բերելն ինքնապատակ մի արժեք չէ, այլ միջոց՝ կյանքում դործադրելու: Այս տեսակետից ուսուցիչը, բնական է, վոր ինքնազարգացման միջոցով ձեռք բերած իր գիտությունը պետք է գործադրի՝ զարգացում և իր հասարակական աշխատանքների ասպարիզում: Սա մյուս կողմից ավելի կնպաստի խորացնելու ձեռք բերածի գիտական պաշարը:

6. ԻՆԳՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ. — Գիրքն ինքնազարգացման միակ միջոցը չէ: Բացի գրքից, մեր կուլտուրական կյանքում կան բազմակողմ ալիկարևոր գործոններ, վորոնց կողքից, ի դեպ, հաճախ անցնում ենք անտարբեր, առանց նշմարելու: Վերցնենք որինակ՝ հասարակական փոխհարաբերությունների խնդիրը. բազմազան յերևույթներ ամենորայ մեր պրակտիկայում ծառանում են մեր առաջ, սակայն մեր կողմից հարկավոր ուշադրություն չեն արժանանում, իրենց արժանի բացատրությունը չեն ստանում: Ինքնազարգացման աշխատանքի համար կարևոր միջոցներ են նաև լրագիրը, հետադի, գասախոսի կենդանի խոսքը, հերկայացումը, կինոն, համերգը, երևույթալան, թանգարանը, ցուցահանդեսը և այլն: Վերը թված միջոցներից շատերը գրքի հետ համեմատած, ունեն այն առավելությունը, վոր միայն մտքի վրա չեն ազդում, այլ և զգացմունքների ու կամքի և գաստիարակում են կողմից բնագրները: Ինքնազարգացման համար արանք կարևոր գործոններ են, վոր նույնպես սխտեմատիկ ու ծրագրված կերպով պետք է ոգտագործվեն:

VI. ԻՆԲՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

1. ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻ ԽԱՇՎԱՌՄԱՆ ՇԵՄԱԿԱՆՈՒՄԸ. — Կազմակերպչորեն վոչ մի գործ լավ չի կարող գրվել, յեթե չկա կանոնավոր հաշվառում: Հաշվառումը հնարավորություն է տալիս ճանաչել գործի ուժեղ ու թուլը

ողմերը և ձեռք առնել անհրաժեշտ միջոցները նկատված բացերը վերացնելու համար: Ինքնազարգացման աշխատանքի ասպարիզում կանոնավոր և սխառեմատիկ կատարվող հաշվառումը կարևոր է միայն գործը ղեկավարող որդանի, այլ և աշխատանքը կատարող անհատի կամ խմբակի համար: Հաշվառումը կանոնավոր լինելու համար պետք է սահմանված կարգով, պարբերաբար, առանց ուշացումների ներկայացվեն պահանջված ճիշտ գիտողությունները համապատասխան մարմնին:

2 ԻճԳՏԱԳԱՐԳԱԳՄԱՆ ԽԱՐԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՃԻԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐԻ ԽԱՎԱՐԱՄԱՆ ԶԵՎԵՐԸ.— Ինքնազարգացման աշխատանքների հաշվառման շատ տեսակներ ու ձևեր գոյություն ունեն: Դրանցից կարևոր է կանգ առնել միայն մեկ տեսակի, այն է արձանագրությունների հետևյալ ձևերի միջև.

Դ Ա Ս Ն . . . Արձանագրութ. (այսինչ) . . . Խմբ. Ն . . . Ներկաների թիվը . . .
 . . . ամիս . . . թիվը . . . Ըստ (այսինչ) . . . Ծրագրի . . . Նախագահ . . .
 աշխ. սկիզբը . . . Ժ . . . Բարտալար . . .
 վերջացր. . . Ժ . . . Բ.

Զբաղմունքի թեման ու յենթաթեման	Խմբակի յեզ-րակացու-թյունը (նյութի մասին)	Առանձին կարծիք (ազ-գանունը)	Հարցեր ու-ցենդենտին	Ռեցենդենտի գիտողու-թյունները
--------------------------------	--	-----------------------------	---------------------	------------------------------

